ԱՐՄԱՆ ՍՊԱՐՏԱԿԻ ՔԵՐՈԲՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

ՀՀ-ԵՄ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ «ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ» ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Եվրոպական Միության անդամ երկիր հանդիսացող Լեհաստանի և Շվեդիայի արտգործնախարարների կողմից 2008թ. առաջարկվեց ներդնել ԵՄ հետ համագործակցության նոր ծրագիր, որը թույլ կտար հարաբերություններ խորացնել ԵՄ անդամ չհանդիսացող մի շարք երկրների հետ: Նրանց կողմից առաջարկվում էր հարաբերությունները խորացնել Եվրոպայից դեպի արևելք ընկած այնպիսի երկրների հետ, ինչպիսիք էին Հայաստանը, Ուկրաինան, Վրաստանը, Մոլդովան, Ադրբեջանը և Բելառուսը: Այդ նախաձեռնությունը հավանության արժանացավ 2009թ. մայիսի 7-ին Պրահայի գագաթնաժողովի ժամանակ և ստացավ Արևելյան գործընկերություն անվանումը: Նման նախաձեռնությունը կարելի է պայմանավորել մի շարք գործոններով, որոնք իրենց բովանդակությամբ կրում են ոչ միայն քաղաքական, այլ նաև տնտեսական բնույթ: Երբ 2004թ. ԵՄ շարքերը համալրեցին մոտ 10 երկրներ, արդեն իսկ անհրաժեշտություն էր զգացվում վերլուծելու, թե ԵՄ-ն էլ ինչ ուղղություններով կարող է աշխատանք տանել և ավելի ընդլայնել իր արդեն իսկ 28 երկրների սահմանները ներառող ինտեգրացիոն կառույցը: Սա բնական է, քանի որ յուրաքանչյուր ինտեգրացիոն միավոր ձգտում է ոչ միայն տնտեսական առումով ընդլայնվել, զարգանալ և հզորանալ, այլ նաև քաղաքական, աշխարհագրական և այլ առումներով: Արևելյան գործընկերության ծրագիրը կյանքի կոչելու գործընթացն ավելի արագացավ և սկսեց առարկայական տեսք ստանալ ռուս-վրացական հարաբերությունների վատթարացման, ինչպես նաև համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառով: Այս հանգամանքները ավելի ակնհայտորեն ցույց տվեցին ԵՄ հնարավոր թույլ տեղերը, և նախապայմաններ առաջացան եվրոպական երկրներում մտածել արտաքին քաղաքական և տնտեսական բացասական ազդեցությունների նվազեցման կամ չեզոքացման ուսումնասիրություններ իրականացնելու համար: Դա էր հիմնական պատճառը, որ ԵՄ-ը ձգտեց իր շուրջը ստեղծել, այսպես կոչված, անվտանգության գոտի՝ իր շուրջը հավաքելով հետխորհրդային երկրների մի մասին:

Այս նոր համագործակցությունը ԵՄ և Արևելյան գործընկերության երկրների միջև չէր ենթադրում և հիմա էլ չի ենթադրում հետագայում վերջիններիս միացումը ԵՄ, բայց էականորեն կարող է նպաստել այդ երկրների բազմաթիվ ոլորտների առաջընթացին:

Արևելյան գործնկերության ծրագիրն ինքնանպատակ չէր և միանշանակ իր մեջ ներառում էր այն ուղղությունները, որտեղ ԵՄ-ը և Արևելյան գործընկերության երկրները պետք է շարունակեին իրենց համագործակցությունը: Մասնավորապես, Արևելյան գործընկերությունը ենթադրում է՝

- Նոր սերնդի ասոցացման համաձայնագրի կնքում,
- ԵՄ տնտեսության հետ ինտեգրում և ազատ առևտրի վերաբերյալ խորը համաձայնագրի կնքում,
- ԵՄ մուտքի վիզայի աստիճանական ազատականացում, անօրինական միգրացիայի դեմ պայքար,
- Էներգետիկ անվտանգության համաձայնագրի ընդլայնում,
- Ֆինանսական օգնության մեծացում,
- Շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության վերաբերյալ հարցերում սերտ համագործակցություն,
- Միջազգային կապերի ընդլայնում և քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցություն[1]:

[1] http://eap-csf.eu/ru/about-csf-eap/eap/

Արևելյան գործընկերությունը հիմնված է միջազգային իրավունքի և այնպիսի հիմնարար սկզբունքների վրա, ինչպիսիք են՝ ժողովրդավարությունը և օրենքի գերակայությունը, մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, կայուն զարգացմամբ ազատ շուկայական տնտեսությունը:

Վերոնշյալ ուղղություններով ԵՄ և Արևելյան գործընկերության երկրների միջև հարաբերությունները խորացնելու համար Արևելյան գործընկերության ծրագրին ըստ 2009թ. նախնական տվյալների նախատեսվում էր հատկացնել 600 մլն եվրո գումար Եվրոպական հարևանություն գործիքի շրջանակներում, բայց հետագայում որոշում կայացվեց այդ գումարը 2010-2013 թթ. համար մեծացնել մինչև 1,9 մլրդ եվրոյի:

ՀՀ-ԵՄ համագործակցությունը Արևելյան գործընկերության շրջանակներում կարելի է համարել հարաբերությունների խորացման հերթական փուլերից մեկը, քանի որ այդ հարաբերությունները նոր չեն և ունեն մոտ երկու տասնամյակի պատմություն: ՀՀ-ԵՄ համագործակցության նախադրյալներ ստեղծվել են դեռևս 1996թ. Գործընկերության և Համագործակցության մասին Համաձայնագրով (ԳՀՀ), որն ուժի մեջ է մտել 1999թ. հուլիսի 1-ից:

Կնքելով այդ Համաձայնագիրը կողմերն իրենց առջև նպատակ էին դրել համագործակցության եզրեր գտնել բոլոր հնարավոր ուղղություններով (բացառությամբ ռազմական ոլորտի) և գործադրել առավելագույն ջանքերը այդ համագործակցության արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ: Մասնավորապես Համաձայնագրի կնքմամբ կողմերը նախ և առաջ իրենց առջև նպատակ էին դրել՝

- հիմքեր ստեղծել քաղաքական երկխոսության, քաղաքական կապերի ձևավորման և խորացման համար,
- աջակցել Հայաստանի Հանրապետությանը՝ երկրում ժողովրդավարությունն ամրապնդելու, տնտեսությունը զարգացնելու և ավարտելու անցումը շուկայական տնտեսությանը,
- ամրապնդել օրենքի իշխանությունը, ներառյալ իրավական համակարգի բարեփոխումները,
- նպաստել կողմերի միջև առևտրին, ներդրումներին և ներդաշնակ տնտեսական կապերին,
- նպաստել մտավոր, արդյունաբերական և առևտրային սեփականության պաշտպանությանը,
- հիմք ստեղծել օրենսդրական, տնտեսական, սոցիալական, ֆինանսական, գիտական, տեխնոլոգիական և մշակութային համագործակցության համար[1]:

Համաձայնագրով նախատեսված նպատակների շրջանակներն արդեն իսկ խոսում են այն մասին, որ դեռևս այն ժամանակվանից՝ համագործակցություն սկսելու հենց սկզբից, կողմերը պատրաստակամ են եղել գործադրել բոլոր հնարավոր ջանքերը Հայաստանի և ԵՄ երկրների միջև բազմավեկտոր համագործակցություն ծավալելու և խորացնելու համար:

Վերոնշյալ նպատակների հասնելու համար կողմերը չսահմանափակվեցին միայն ԳՀՀ-ով սահմանված նպատակների իրագործմամբ, այլ շարունակեցին նոր ճանապարհներ փնտրել այդ համագործակցությունն ավելի համապարփակ դարձնելու համար: Ամենևին էլ պատահական չէր, որ արդեն 2004 թ. ԵՄ-ը մի շարք երկրների, այդ թվում ՀՀ հետ նախաձեռնեց և ընթացք տվեցին Եվրոպական հարևանության քաղաքականությանը: Արդեն 2005թ. Եվրոպական հանձնաժողովը Եվրոպական խորհրդին զեկույց ներկայացրեց ՀՀ վերաբերյալ, իսկ արդեն 2006թ. նոյեմբերի 14-ին, երեք փուլերով իրականացված բանակցությունների արդյունքում, որոշում ընդունվեց և ստորագրվեց հայ-եվրոպական հնգամյա գործողությունների ծրագիր Եվրոպական հարևանություն քաղաքականության շրջանակներում: Մի շարք մասնագետների կարծիքով Եվրոպական հարևանության քաղաքականությունը լուրջ արդյունքների չբերեցին: Այդ անարդյունավետության հիմնական պատճառը համարվում էր ԵՄ կողմից հարևան երկրների նկատմամբ ընհանուր, այլ ոչ թե տարբերակված մոտեցումը:

Այս քաղաքականությանն ի վերջո հաջորդեց Արևելյան գործընկերության շրջանակներում ՀՀ-ԵՄ համագործակցությունը: Այս բազմամյա համագործակցությունը բնականաբար իր դրական ազդեցությունն է թողել տնտեսական ոլորտում հարաբերությունների ընդլայնման վրա, մասնավորապես խոսքը գնում է արտաքին առևտրի և ներդրումների ոլորտների մասին:

[1] http://mineconomy.am/arm/43/gortsaruyt.html



Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայք՝ armstat.am

Արտաքին առևտրի ոլորտում ԵՄ-ն Հայաստանի համար տարիների ընթացքում դարձել է շատ կարևոր գործընկեր: Ըստ 2015թ. տվյալների Հայաստանը ԵՄ երկրներ է արտահանել ավելի քան 441 մլն դոլարի ապրանք, որը կազմել է ընդհանուր արտահանման մոտ 29,6 տոկոսը (ՀՀ-ից ԵՄ-ն արտահանումը 2014թ. կազմել է 465մլն դոլար կամ ՀՀ արտահանման 30,1 տոկոսը)[1]: Այս ցուցանիշով ԵՄ-ն Հայաստանի թիվ մեկ գործընկերն է հանդիսանում: Բնականաբար ԵՄ ոչ բոլոր երկրների հետ է հաջողվել արտահանման ոլորտում զգալի արդյունքներ գրանցել: ԵՄ երկրներից արտահանման ոլորտում ՀՀ խոշորագույն առևտրային գործընկեր են հանդիսանում Գերմանիան (2014թ. 10.2%, 2015թ.՝ 9,8%), Բուլղարիան (2014 թ.՝ 5.5%, 2015թ.՝5,3%), Իտալիան (2014թ.՝ 2,2%, 2015թ.՝ 3,3%), Նիդեռլանդները (2014թ.՝ 4.8%, 2015թ.՝ 3.2%), Բելգիան (2014թ.՝ 4%, 2015թ.՝ 3.2%), որոնց մասնաբաժինը Հայաստանի ընդհանուր արտահանման մեջ 2015թ. տվյալների համաձայն կազմել է մոտ 24.8%: Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ 2015թ. Ռումինիային բաժին է հասել ՀՀ արտահանման մոտ 2.6%-ն այն դեպքում, երբ 2014թ. տվյալ երկրի մասնաբաժինը եղել է զրոյական, այսինքն՝ մի շարք ուղղություններով կարելի է նկատել տնտեսական համագործակցության էական աշխուժացումներ:

Ինչ վերաբերում է ՀՀ-ից ԵՄ արտահանման ապրանքային կառուցվածքին, ապա ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այն հիմնականում կրում է հումքային բնույթ: Այսպես, ըստ 2014թ. տվյալների ՀՀ-ից ԵՄ երկրներ արտահանվել է մոտ 110 մլն դոլար արժեքով սև մետաղներ, ավելի քան 107 մլն դոլար արժեքով հանքաքար, խարամ և մոխիր, մոտ 72 մլն դոլարի պղինձ և դրանից իրեր, մոտ 47 մլն դոլարի բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ, 19 մլն դոլարի այլ ոչ թանկարժեք մետաղներ, մետաղակերամիկա և դրանցից ապրանքներ, մոտ 11 մլն դոլարի ալյումին և դրանցից իրեր: Ընդհանուր առմամբ վերոնշյալ ապրանքներին և ապրանքային խմբերին բաժին է հասել ՀՀ-ից ԵՄ արտահանման մոտ 78,7 տոկոսը: Իհարկե հումքային ապրանքների նման մեծ մասնաբաժինը ՀՀ-ԵՄ առևտրում խոսում է այն մասին, որ ԵՄ երկրները ՀՀ-ն դիտարկում են ավելի շատ որպես հումքի աղբյուր, բայց ամեն ինչ այդքան էլ վատ և միանշանակ չէ, երբ ուսումնասիրում են ՀՀ-ից ԵՄ արտահանման այլ ապրանքային խմբերը և դրանց ծավալները: Այստեղ մենք տեսնում ենք, որ ԵՄ երկրների կողմից հետաքրքրություն է ցուցաբերվում նաև պատրաստի արտադրանք ներկայացնող ապրանքներ և ապրանքային խմբեր: Այսպես, 2014թ. ՀՀ-ից ԵՄ անդամ երկրներ են արտահանվել 46,5 մլն դոլարի տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ (բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքով), 27,2 մլն դոլարի թռչող ապարատ-

[1] Արտաքին առևտրի և ներդրումների վերաբերյալ այստեղ և ներքևում ներկայացված տվյալներն ամբողջությամբ վերցված են ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքից՝ www.armstat.am:

ներ, տիեզերական ապարատներ և դրանց մասեր, 6,6 մլն դոլարի ոգելից և ոչ ոգելից խմիչքներ և քացախ, ավելի քան 2,2 մլն դոլարի էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ, ձայնագրող ապարատներ և դրանց մասեր, 2,1 մլն դոլարի գործիքներ, դանակներ, գդալներ, պատառաքաղներ ոչ թանկարժեք մետաղներից, 2 մլն դոլարի օպտիկական, լուսանկարչական չափիչ, բժշկական և վիրաբուժական սարքեր, 1,8 մլն դոլարի միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ և մեխանիկական մասեր, 1,5 մլն դոլարի կաշվե իրեր, կենդանիների աղիքներից իրեր, ավելի քան 1,2 մլն դոլարի ձուկ և խեցգետնավորներ, մանրուքներ և այլ ծովային անողնաշարավորներ, մոտ 1,2 մլն դոլարի տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ մեքենայական կամ ձեռքի գործվածքով: Վերջիններիս ծավալներն իհարկե մեծ չեն, բայց լուրջ նախադրյալներ կարող են ստեղծել ԵՄ հետ առևտուրն ավելի դիվերսիֆիկացնելու և այլ ապրանքների և ապրանքային խմբերի նկատմամբ Եվրոպայի շուկայի ուշադրությունը գրավելու տեսանկյունից: Այս առումով բնականաբար ԵՄ-ի և նրա անդամ երկրների հետ ցանկացած համագործակցություն լինի դա Արևելյան գործընկերության ծրագիրը, թե այլ ծրագիր կարող են միայն դրականորեն անդրադառնալ տնտեսական ոլորտում համագործակցության խորացման վրա: Այս միտքն ավելի պատկերավոր և առարկայական է դառնում, երբ տեսնում ենք Արևելյան գործընկերության և այլ ծրագրերի շրջանակներում ԵՄ շահագրգռվածությունը ՀՀ-ում ՓՄՁ-ների զարգացման և մրցակցային դաշտի կատարելագործման ոլորտներում:

Ներմուծման ոլորտում նույնպես գրանցվել են բավականին մեծ արդյունքներ: Վերջին տասը տարիների ընթացքում ԵՄ երկրներից ՀՀ ներմուծման ծավալները գերազանցել են 1 մլրդ դոլարի շեմը: Օրինակ, 2014թ. ԵՄ-ից ՀՀ ներմուծումը կազմել է ավելի քան 1,1 մլրդ դոլար: 2015թ. այդ ցուցանիշը զգալիորեն կրճատվել է՝ կազմելով մոտ 780 մլն դոլար: Ներմուծման ծավալների ավելի քան 31 տոկոս նվազումը պայմանավորված էր դեպի ՀՀ արտերկրից ուղարկվող տրանսֆերտների զգալի նվազումով, եվրոպական մի շարք երկրներում տնտեսական աճի տեմպերի նվազմամբ, ԵԱՏՄ-ին ՀՀ անդամակցությամբ և այլն: ՌԴ տնտեսական վիճակի վատթարացումը, ռուբլու զգալի արժեզրկումը նպաստեցին ՀՀ-ից ՌԴ մեկնող ախատանքային միգրանտների հոսքի նվազմանը և վերջիններիս կողմից ՀՀ ուղարկվող տրանսֆերտների զգալի կրճատմանը, ինչն էլ իր հերթին հանգեցրեց մի շարք եվրոպական ապրանքների նկատմամբ պահանջարկի կրճատմանը:

Ներմուծման ոլորտում ԵՄ անդամ երկրներից ՀՀ խոշորագույն առևտրային գործընկերներն են հանդիսանում Գերմանիան (2014թ.՝ 6.4%, 2015թ.՝ 6.2%), Իտալիան (2014թ.՝ 4.1%, 2015թ.՝ 4.6%), Ֆրանսիան (2014թ.՝ 1.8%, 2015թ.՝ 2%), Բելգիան (2014թ.՝ 2%, 2015թ.՝ 1.5%), Նիդեռլանդները (2014թ.՝ 1.1%, 2015թ.՝ 0.9%), Միացյալ Թագավորությունը (2014թ.՝ 1.3%, 2015թ.՝ 0.8%), Իսպանիան (2014թ.՝ 1.1%, 2015թ.՝ 0.8%), Բուլղարիան (2014թ.՝ 0.6%, 2015թ.՝ 0.8%), Շվեդիան (2014թ.՝ 0.6%, 2015թ.՝ 0.7%), Չեխիայի Հանրապետությունը (2014թ.՝ 0.4%, 2015թ.՝ 0.6%), Ավստրիան (2014թ.՝ 1.6%, 2015թ.՝ 0.5%), Հունաստանը (2014թ.՝ 0.4%, 2015թ.՝ 0.5%), Ռումինիան (2014թ.՝ 0.9%, 2015թ.՝ 0.5%):

Ներմուծման ապրանքային կառուցվածքն արտահանման համեմատ շատ ավելի դիվերսիֆիկացված բնույթ է կրում և իր ծավալներով զգալիորեն գերազանցում է արտահանման ծավալներին: Օրինակ, արտահանման ոլորտում 1 մլն դոլարը գերազանցող ապրանքային խմբերի քանակը երկնիշ դասակարգման դեպքում 16 է, իսկ ներմուծման ոլորտում՝ 66: Ըստ ՀՀ ԱՎԾ 2014թ. տվյալների ԵՄ երկներից ՀՀ մեծ ծավալներով ներմուծվել են այնպիսի ապրանքներ, ինչպիսիք են՝ միջուկային ռեակտորները, կաթսաները, սարքավորումները և մեխանիկական մասերը՝ 160,8 մլն դոլար, վերգետնյա տրանսպորտային միջոցները (բացի երկաթուղային կամ տրամվայի շարժակազմը), դրանց մասերը և սարքավորումները՝ 160,7 մլն դոլար, բնական կամ արհեստական մարգարիտը, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարերը, մետաղները՝ 101,7 մլն դոլար, դեղագործական մթերքը՝ 81,7 մլն դոլար, էլեկտրական մեքենաները և սարքավորումները, ձայնագրող ապարատները և դրանց մասերը՝ 59,3 մլն դոլար և այլն: Միայն այս 5 ապրանքային խմբերին բաժին է հասել ԵՄ-ից ՀՀ ներմուծման ավելի քան 49,7 տոկոսը:

Ներմուծվող ապրանքային խմբերի ուսումնասիրությունը թույլ են տալիս եզրակացնել, որ գոնե մի շարք ապրանքների գծով ԵՄ-ը մեզ համար շարունակում է մնալ անփոխարինելի կամ նվազագույնը որպես այլընտրանքային առևտրային գործընկեր՝ համեմատած մասնավորապես ԵԱՏՄ անդամ երկրների հետ: Մասնավորապես, այդպիսի ապրանքներից և ապրանքային

խմբերից կարելի է նշել դեղագործական մթերքը, վերգետնյա տրանսպորտային միջոցները, ոգելից և ոչ ոգելից ըմպելիքները և քացախը, քիմիական թելերը, քիմիական գործվածքները:

Ինչ վերաբերում է ԵՄ երկրների հետ ներդրումային ոլորտում համագործակցությանը, ապա այստեղ նույնպես հաջողվել է մի շարք առաջատար ԵՄ երկրների հետ բավականին խորը և բազմակողմանի կապեր հաստատել: Այդպիսի արդյունքների մասին թերևս խոսում են ՀՀ տնտեսության տարբեր ոլորտներ ուղղված ուղղակի և այլ ներդրումների ծավալները: Ընդհանուր առմամբ, 1988թ. մինչև 2015թ. սեպտեմբերի վերջ ՀՀ տնտեսության տարբեր հատվածներ են ուղղվել 5 տրլն դրամից ավել ներդրումներ, որից ավելի քան 3,1 տրլն կազմել են ուղղակի ներդրումները: Այդ ներդրումներից մոտ 2տրլն դրամը եղել են ԵՄ երկրների կողմից իրականացված ներդրումները, որից 1 տրլն դրամը ուղղակի ներդրումների տեսքով: ՀՀ տնտեսության տարբեր ոլորտներում ներդրումներ իրականացվել են գրեթե բոլոր ԵՄ երկրների կողմից, բայց այդ ներդրումների զգալի մասը բաժին է ընկնում այնպիսի երկրների, ինչպիսիք են Ֆրանսիան, Գերմանիան, Կիպրոսը, Հունաստանը, Նիդեռլանդները, Միացյալ Թագավորությունը, Լյուքսեմբուրգը, Ֆինլանդիան, Հունգարիան, Իտալիան: Այս թվարկված տասը երկրների կողմից 1988-2015թթ. ընթացքում կատարվել է 1,88 տրլն դրամի ներդրում, որից մոտ 971 մլրդ դրամն ուղղակի ներդրումների տեսքով:

Ներդրումների իրականացման համար ԵՄ երկրների համար առավել գրավիչ ուղղություններն են հանդիսացել հանքահումքային արդյունաբերությունը, խմիչքի արտադրությունը, էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում, մեծածախ և մանրածախ առևտուրը:

Ներկայացված պատկերը բնականաբար խոսում է ՀՀ-ԵՄ համագործակցության բավականին բարձր մակարդակի մասին և լուրջ նախադրյալներ է ստեղծում ԵՄ հետ համագործակցությունը հնարավորությունների շրջանակներում ավելի համապարփակ և ամբողջական դարձնելու համար:

Չնայած նրան, որ Հայաստանն ընտրեց եվրասիական ուղին և որոշեց գնալ այդ ճանապարհով՝ չստորագրելով ԵՄ հետ ասոցացման պայմանագիրը, այնուամենայնիվ 2014թ-ին ԵՄ-ը և ՀՀ-ն որոշում կայացրեցին շարունակել համագործակցությունը և խորացնել հարաբերությունները տարբեր ուղղություններով այնքանով, որքանով դրանք չեն հակասի Եվրասիական տնտեսական միության պայմանագրով սահմանված պայմաններին:

Ըստ ԵՄ արտաքին քաղաքականության և անվտանգության հարցերով գերագույն հանձնակատար Ֆեդերիկա Մոգերինի, ՀՀ հետ բանակցությունների արդյունքում մշակվող նոր համաձայնագիրը պետք է՝

- առաջարկի համակողմանի շրջանակներ քաղաքական, տնտեսական և ճյուղային համագործակցության տեսանկյունից,
- ուժեղացնի համագործակցությունն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են էներգետիկան, տրանսպորտը և շրջակա միջավայրին առնչվող ոլրտները,
- երկու կողմերի համար էլ ապահովի առևտրի և ներդրումների իրականացման նոր հնարավորություններ,
- ի շահ քաղաքացիների բարձրացնի նրանց մոբիլությունը (ազատ տեղաշարժի հնարավորությունները) թե ԵՄ և թե ՀՀ տարածքում[1]:

Նոր մշակվող համաձայնագրի նկարագիրն ամեն դեպքում խոսում է այն մասին, որ ԵՄ երկրներն այնուամենայնիվ պատրաստակամ են նույն խանդավառությամբ շարունակել ՀՀ հետ բազմակողմ համագործակցությունը, ինչի մասին խոսում են նաև Եվրոպական գործընկերության գործիքի շրջանակներում Արևելյան գործընկերության երկրներին, մասնավորապես Հայաստանին ֆինանսական միջոցների տրամադրման ծրագրերը՝ ամենատարբեր ոլորտներում համապատասխան բարեփոխումներ իրականացնելու համար:

Կառավարության, Ազգային ժողովի, քաղաքացիական-հասարակական կազմակերպությունների, գործարար խմբերի շահեր ներկայացնող կազմակերպությունների, միջազգային կազմակերպությունների, միջազգային ֆինանսկան ինստիտուտների և ԵՄ անդամ պետությունների հետ ակտիվ քննարկումների արդյունքում որոշվել են այն ոլորտները, որոնք Արևելյան գործընկերության շրջանակներում արժանանալու են առավելագույն ուշադրության և անվերապահ օժանդակության: Այդ ոլորտներն են՝ 1. Մասնավոր սեկտորի զարգացումը, 2. Պետական կառա-

[1] http://eeas.europa.eu/top_stories/2015/071215_eu-armenia_agreement_negotiations_en.htm

վարման համակարգի բարեփոխումները և 3. Արդարադատության համակարգում իրականացվելիք բարեփոխումները:

2014-2020թթ. ընթացքում Եվրոպական հարևանության գործիքի միջոցով ՀՀ-ին տրամադրվելու է 252 մլն-ից մինչև 308 մլն եվրո դրամական միջոցներ: Դրանց տեղաբաշխումը տեղի է ունենալու 2 փուլով՝ 2014-2017թթ. համար նախատեսվում է տեղաբաշխել 140 մլն եվրոից մինչև 170 մլն եվրո գումար: Այդ միջոցները նախատեսվում է որոշակի համամասնություններով ուղղել վերոնշյալ ոլորտներում բարեփոխումների ծրագրորի իրականացմանը: Այսպես, մասնավոր հատվածի զարգացման համար նախատեսվում է հատկացնել վերոնշյալ գումարի 35 տոկոսը, հանրային ոլորտի բարեփոխումներին ուղղվելու է այդ միջոցների 25 տոկոսը, արդարադատության համակարգի բարեփոխումներին՝ 20 տոկոսը, ինստիտուտների ձևավորման և զարգացմանն ուղղված փոխլրացնող աջակցությանը՝ 15 տոկոս, քաղաքացիական-հասարակական կազմակերպություններին փոխլրացնող աջակցությանը՝ մոտ 5 տոկոս[1]:

Հայաստանը Արևելյան գործընկերության շրջանակներում ստացել է 19,1 մլն եվրո գումար, որպեսզի բարձրացնի այն կառույցների աշխատանքի արդյունավետությունը, որոնք պատասխանատու են ԵՄ հետ համագործակցության համար: Որպեսզի այդ միջոցներն արդյունավետ օգտագործվեն ու ապահովեն որոշակի արդյունքներ նախ և առաջ անհրաժեշտ է ուժեղացնել տեխնիկական և ադմինիստրատիվ հնարավորությունները առևտրի և վիզային ռեժիմի ազատականացման ոլորտում:

Ֆինանսական միջոցների տեղաբաշխման ուղղությունները և համամասանությունները խոսում են այն մասին, որ այս ծրագրի շրջանակներում նախատեսվում է ՀՀ բազմաթիվ ոլորտներում իրականացնել համակարգային փոփոխություններ, որոնք ուղղակիորեն կամ անուղղակի կերպով կնպաստեն տնտեսության ընդլայնմանը և զարգացմանը: Օրինակ, հանրային ոլորտի, արդարադատության ոլորտի բարեփոխումները կարող են տնտեսության զարգացմանը նպաստել այնքանով, որ կստեղծեն հիմքեր արդյունավետ տնտեսական քաղաքականության մշակման, առավել արդյունավետ մրցակցային դաշտի ապահովման և շուկայական տնտեսության հետագա կայացման համար:

Տնտեսության զարգացմանը կարող է նպաստել նաև վիզային ռեժիմի ազատականացումը, որը ենթադրվում է իրականություն դարձնել նոր համաձայնագրի շրջանակներում: Վերջինս էականորեն կնպաստի տուրիզմի զարգացմանը և հնարավորություններ կստեղծի ոչ միայն որոշ արտադրատեսակների արտադրության, այլ նաև ծառայությունների մի շարք ոլորտների ընդլայնման համար: Սա ոչ միայն հնարավորություններ կստեղծի դեպի ՀՀ արտարժույթի ներհոսքի համար, այլ նաև կապահովի բարձր որակավորում ունեցող մասնագետների ազատ տեղաշարժը:

Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ ԵՄ հետ համագործակցությունը համահունչ է ՀՀ ընդհանուր զարգացման ռազմավարությանը և արդյունավետ քայլերի, ռեսուրսների արդյունավետ օգտագործման պարագայում կարող է ապահովել զգալի արդյունքներ:

Այսպես, ՀՀ զարգացման ռազմավարության մեջ շեշտը դրվում է բիզնես միջավայրի և ներդրումային միջավայրի շարունակական բարելավման վրա և համարվում է պետական քաղաքականության առաջնահերթություններից մեկը զբաղվածության մակարդակի բարձրացման գործում: Ներկայումս այդ նպատակներին հասնելու համար հիմնական սահմանափակող գործոններ են համարվում աշխատաշուկայի անարդյունավետությունը, ինստիտուցիոնալ շրջանակների թուլությունը, ֆինանսական ռեսուրսների նկատմամբ սահմանափակ մուտքը (սահմանափակ հասանելիությունը), ՀՀ շրջաններում բազմավեկտոր զարգացվածության բացակայությունը, ֆերմերային կոոպերատիվների ստեղծման կարողության պակասը:

Գաղտնիք չէ, որ Արևելյան գործընկերության ծրագրի շրջանակներում ԵՄ-ը նպատակ ունի նաև խթանել ՓՄՁ-ների և գյուղական ձեռնարկությունների զարգացումը: Վերջիններիս աճը և ընդլայնումը թույլ կտա Հայաստանին իրագործել իր բարեփոխումների ծրագիրը և արդյունավետորեն պայքարել աղքատության դեմ:

Գյուղատնտեսության արդյունավետ և կայուն զարգացումն իր հերթին կխթանի ֆերմերային ասոցիացիաների և կոոպերատիվների զարգացմանը, գյուղական մասնավոր հատվածի գործու-

[1] Programming of the European Neghbourhood Instrument (ENI) – 2014-2020: Single Support Framework for EU support to Armenia (2014-2017), p. 7. http://eeas.europa.eu/enp/pdf/financing-the-enp/armenia_2014_2017_programming_document_en.pdf

նեության զարգացմանը (գյուղատնտեսության և գյուղական համայնքների զարգացման Եվրոպական հարևանության ծրագրի միջոցով):

ԵՄ-ը աջակցել է ՀՀ մասնավոր հատվածի զարգացմանը նորմատիվային բարեփոխումների և փոքր բիզնեսի վիճակի գնահատման՝ գլխավորապես մրցակցային պայմանների ապահովման համար պատասխանատու կառույցների, մաքսային ծառայությունների և այլ տնտեսական տեսչական մարմիններին աջակցման միջոցով: ԵՄ-ը աջակցել է մասնավոր հատվածի զարգացմանը նաև ռեգիոնալ նախաձեռնությունների միջոցով: Դրանց թվին են պատկանում Փոքր բիզնեսի աջակցման ծրագրերը, East-Invest ծրագիրը, Փոքր և միջին ձեռնարկություններին ֆինանսական աջակցության ծրագիրը: Ի հավելումն այդ ամենի, ԵՄ աջակցությունը պատրաստվում է այն նպատակով, որպեսզի նպաստի ՀՀ շրջանների մրցակցության մակարդակի բարելավմանը, որն իրականացվում է տնտեսական աճին նպաստելու, աշխատատեղերի ստեղծման և մասնավոր հատվածի զարգացման միջոցով:

Այնուամենայնիվ այս ծրագրերը ենթադրում են նոր բարեփոխումներ ռեգիոնալ, գյուղական, մասնավոր հատվածի գործընկերության ոլորտներում, որոնք ենթադրում են հետագա աջակցություն ֆինանսական և այլ առումներով այդ բարեփոխումների հետագա փուլերն իրականացնելու համար: Բայց պետք է նշել, որ այդ բարեփոխումները կրում են երկարաժամկետ բնույթ, և կպահանջվի որոշակի ժամանակ մասնավոր հատվածի զարգացումը ամբողջ երկրի մակարդակով ցանկալի արդյուքների հասցնելու համար:

Հարևանության ներդրումային հաստատությունների միջոցով ԵՄ-ը նաև օգնություն է տրամադրում այնպիսի ոլորտներին, ինչպիսիք են էներգետիկան, տրանսպորտը, ջրային ոլորտը և կապիտալի շուկան՝ նպաստելով հանրային մասնավոր հատվածին, ինչպես նաև մասնավոր հատվածի համար բարելավելով ֆինանսական ռեսուրսներին հասանելիությունը:

ԵՄ-ը և նրա անդամ երկրներն ունեն բավականին մեծ փորձ եվրոպական տարբեր շրջանների տնտեսական անհավասարությունների վերացման ուղղությամբ, որն իրականացվում է քաղաքականության, տեխնիկական և ֆինանսական գործիքների, գլխավորապես կառուցվածքային և համախմբված հիմնադրամների միջոցով՝ ստեղծելով ավելի փոխկապակցված միջավայր մասնավոր հատվածի զարգացման համար: Սա ԵՄ-ի աջակցության ավելացված արժեքն է ՀՀ կողմից իրականացվող քաղաքականություններին տարբեր ոլորտներում, հատկապես ռեգիոնալ մրցակցության, տնտեսական դիվերսիֆիկացիայի, ՓՄՁ-ների զարգացման և աշխատուժի մոբիլության ոլորտներում:

Հայաստանն իրավունք ունի աջակցություն ստանալ նաև ԵՄ մի շարք այլ ծրագրերից, ինչպիսիք են Խաղաղության և կայունության աջակցման ծրագիրը, Մարդասիրական օգնությունը, Գործընկերային գործիք կոչվող ծրագիրը, Ժողովրդավարության և մարդու իրավունքների եվրոպական գործիքը, Միջուկային անվտանգության համագործակցության գործիքը, Մակրոֆինանսական օգնությունը, էներգետիկայի, տրանսպորտի, կրթության, մշակույթի զարգացմանն ուղղված մի շարք թեմատիկ ծրագրերը և այլն: ԵՄ-ի ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության շջանակներում կարող է արժանանալ որոշակի դիվանագիտական աջակցության՝ իհարկե նկատի ունենալով գոյություն ունեցող իրավիճակը և պայմանները:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ ավելի քան երկու տասնամյակի պատմություն ունեցող ՀՀ-ԵՄ համագործակցությունը բազմաթիվ ոլորտներում, մասնավորապես տնտեսական ոլորտում տվել է որոշակի արդյունքներ, և այդ արդյունքները կարող են ավելի մեծանալ նոր նախաձեռնությունների, ծրագրերի շրջանակներում փոխգործակցությունը շարունակելու դեպքում: Իհարկե չբացարձականացնելով ԵՄ հետ ունեցած հարաբերությունների արդյունքում ունեցած տնտեսական օգուտները՝ այնուամենայնիվ չենք կարող չընդունել այն հանգամանքը, որ գոյություն ունեցող համաձայնագրերը և նոր մշակվող համաձայնագիրն իրենց բովանդակությամբ, նրանում ամրագրված նպատակներով և խնդիրներով ուղղված են տնտեսության խթանմանը, և տրամադրվող ռեսուրսների (մասնավորապես Արևելյան գործընկերության շրջանակներում տրամադրվող ռեսուրսների) արդյունավետ օգտագործման պարագայում ՀՀ-ն կարող է առաջընթաց գրանցել ոչ միայն արտաքին առևտրի ոլորտում, այլ նաև արտաքին ներդրումների ներգրավման, տուրիզմի, մրցակցային դաշտի կատարելագործման, տնտեսությանը էապես նպաստող տնտեսական քաղաքականության մշակման և կատարելագործման ոլորտներում:

ՀՀ-ԵՄ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ «ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ» ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

ԱՐՄԱՆ ՍՊԱՐՏԱԿԻ ՔԵՐՈԲՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

Համառոտագիր

Համագործակցության մոտ երկու տասնամյակների ընթացքում Հայաստանին և ԵՄ-ին հաջողվել է որոշակի ձեռքբերումներ ունենալ ինչպես արտաքին առևտրի, այնպես էլ օտարերկրյա ներդրումների ոլորտներում: Նման համագործակցության հիմքերն ու ընթացքն ապահովվել են Գործընկերության և Համագործակցության մասին Համաձայնագրի, Եվրոպական հարևանության քաղաքականության, Արևելյան գործընկերության և այլ նախաձեռնությունների շնորհիվ, որոնց վերլուծություններն ու արդյունքները ներկայացված են սույն հոդվածում: Այստեղ նաև վերլուծության են ենթարկվել Արևելյան գործընկերության, վերջինիս հիմքերի վրա կառուցվող նոր համաձայնագրի հնարավոր ազդեցությունները ՀՀ տնտեսության և նրա որոշ ոլորտների վրա:

Բանալի բառեր. *Հայաստանի Հանրապետություն, Եվրոպական Միություն, Արևելյան գործընկերության ծրագիր, արտահանում, ներմուծում, օտարերկրյա ներդրումներ, Գործընկերության և Համագործակցության մասին Համաձայնագիր, Եվրոպական հարևանության քաղաքականություն, մասնավոր հատվածի ֆինանսավորում:*

ТОРГОВО-ЭКОНОМИЧЕСКОЕ СОТРУДНИЧЕСТВО РА-ЕС И ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ В РАМКАХ ВОСТОЧНОГО ПАРТНЕРСТВА

АРМАН СПАРТАКОВИЧ КЕРОБЯН, *к.э.н.*
научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

За два десятилетия сотрудничества Армении и ЕС удалось зарегистрировать определенные достижения как в сфере внешней торговли, так и в сфере иностранных инвестиций. Основы и дальнейшее развитие такого сотрудничества были обеспечены благодаря Соглашению о партнерстве и сотрудничестве, Европейской политике соседства, программе Восточного партнерства и другим инициативам, анализ и результаты которых представлены в данной статье. В статье также проанализировано возможное влияние на экономику РА и некоторые ее отрасли программы Восточного партнерства и нового соглашения, создаваемого в рамках данной программы..

Ключевые слова: *Республика Армения, Европейский Союз, Программа Восточного партнерства, экспорт, импорт, иностранные инвестиции, Соглашение о партнерстве и сотрудничестве, европейская политика соседства, финансирование частного сектора.*

ARMENIA-EU TRADE AND ECONOMIC COOPERATION AND DEVELOPMENT PROSPECTS WITHIN THE FRAMEWORK OF EASTERN PARTNERSHIP

ARMAN SPARTAK KEROBYAN, *Ph.D. in Economics*

Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

Armenia and the EU managed to report some progress toward both foreign trade and investment during nearly two decades-long cooperation. The Partnership and Cooperation Agreement, European Neighbourhood Policy, and Eastern Partnership and other initiatives made this cooperation possible and the analysis of which and respective results are presented in the article. The author analyzes the possible impact of both Eastern Partnership program and the new Agreement to be designed based on the latter one on the economy of the Republic of Armenia and on its some sectors.

Keywords: *Republic of Armenia, European Union, Eastern Partnership Program, exports, imports, foreign investments, European Neighborhood Policy, private sector funding.*